ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

Իսրայելի Պետության հետ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու վերաբերյալ բանակցություններ վարելու հետ կապված հարցերի մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 29 որոշման կատարման նպատակով՝

1. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել թեկնածությունների վերաբերյալ առաջարկություններ՝ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու վերաբերյալ Իսրայելի Պետության հետ բանակցություններ վարելու համար բանակցային պատվիրակության (այսուհետ՝ բանակցային պատվիրակություն) կազմի ձևավորման նպատակով:

2. Նշանակել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ առեւտրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Վ. Օ. Նիկիշինային բանակցային պատվիրակության ղեկավար և հանձնարարել նրան ապահովել բանակցային պատվիրակության գործունեությունը:

3. Բանակցային պատվիրակությանը՝ ներկայացնել ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու վերաբերյալ Իսրայելի Պետության հետ բանակցություններ վարելու հրահանգներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից ուսումնասիրության համար:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշևսկի	Բ. Սագինտաև	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով